9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԷՔՍՏԵՌՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Սիրելի՛ աշակերտ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքը: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:
Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Ցանկանում ենք հաջողություն:

1 Ե՞րբ է ընթացել Առաջին աշխարհամարտը:

1) 1914-1918 թթ.
2) 1939-1945 թթ.
3) 1918-1922 թթ.
4) 1945-1950 թթ.

2 Ե՞րբ է ԽՍՀՄ-ում հայտարարվել Մեծ հաղթանակի օր:

1) 1945 թ. սեպտեմբերի 2
2) 1945 թ. մայիսի 9
3) 1944 թ. օգոստոսի 6
4) 1944 թ. հունիսի 6

3 Ե՞րբ է կառուցվել Սառը պատերազմի խորհրդանիշ համարվող Բեռլինի պատը:

1) 1960 թ.
2) 1961 թ.
3) 1962 թ.
4) 1963 թ.

4 Ե՞րբ է դրվել վերակառուցման քաղաքականության սկիզբը ԽՍՀՄ-ում:

1) 1989 թ.
2) 1988 թ.
3) 1984 թ.
4) 1985 թ.

5 Ե՞րբ է ստեղծվել Եվրոպական Միությունը:

1) 1990 թ.
2) 1991 թ.
3) 1992 թ.
4) 1993 թ.

6 Ե՞րբ է կնքվել խորհրդա-գերմանական փոխադարձ չհարձակման պայմանագիրը:

1) 1939 թ.
2) 1938 թ.
3) 1925 թ.
4) 1926 թ.

7 **Ո՞վ է ղեկավարել հնդիկների ազգային-ազատագրական պայքարը 1930-ական թվականներին:**

1) Ինդիրա Գանդի
2) Մահաթմա Գանդի
3) Ջավահարլալ Ներու
4) Մորարջի Դեսայի

8 **Ո՞ր երկրի հետ է ռազմական համագործակցության պայմանագիր կնքել Իտալիան 1936 թվականին:**

1) Ֆրանսիա
2) Գերմանիա
3) Իսպանիա
4) Մեծ Բրիտանիա

9 **Ո՞ր երկրների միջև է ընթացել Սառը պատերազմը:**

1) ԱՄՆ և ԽՍՀՄ
2) Ճապոնիա և ԱՄՆ
3) Մեծ Բրիտանիա և ԳԴՀ
4) Իտալիա և ԳԺՀ

10 **Ո՞ր երկրի նախաձեռնությամբ է ստեղծվել Հյուսիսատլանտյան դաշինքը՝ ՆԱՏՕ-ն:**

1) Թուրքիա
2) Ֆրանսիա
3) ԱՄՆ
4) ԽՍՀՄ

11 **1920-1930-ական թթ. ո՞ր երկրներում են հաստատավել ամբողջատիրական համակարգեր:**

1) Չինաստան, Ֆրանսիա, Գերմանիա
2) Իտալիա, Գերմանիա, ԽՍՀՄ
3) ԽՍՀՄ, Ճապոնիա, Ֆրանսիա
4) Իտալիա, Իսպանիա, ԱՄՆ

12 **ԽՍՀՄ փլուզումից հետո ի՞նչ կառույցի մեջ են միավորվել նախկին խորհրդային 11 պետությունները:**

1) Համագործակցության Շանհայի կազմակերպություն
2) Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն
3) Անկախ պետությունների համագործակցություն
4) Տնտեսական փոխօգնության խորհուրդ

13 **Տրված երկրներից որտե՞ղ չի ծավալվել «Արաբական գարուն» հեղափոխական շարժումը:**

1) Եգիպտոս
2) Ալժիր
3) Լիբիա
4) Իսրայել

14 **Ի՞նչ է անեքսիան:**

1) բռնազավթում
2) համագործակցություն
3) արդիականացում
4) միասնացում

15 **Ի՞նչ է քաղաքացիական պատերազմը:**

1) Երկրի ներսում տարբեր քաղաքական ուժերի, սոցիալական խմբերի միջև զինված պայքար պետական իշխանության հասնելու համար:
2) Մի պետության կողմից մյուս պետության դեմ ընթացող ազատագրական պայքար:
3) Մի պետության կողմից ուժի անօրինական գործադրում մեկ այլ պետության ինքնիշխանության դեմ:
4) Երկրի ներսում սոցիալական համակարգերի, գաղափարաքաղաքական սկզբունքների և համոզմունքների հակադրություն:

16 **Թվարկվածներից ո՞ր միջոցն է կիրառվել ռազմական կոմունիզմի քաղաքականության ժամանակ:**

1) Պարենային հարկի սահմանում
2) Աշխատավարձի տրամադրում բանվոր դասակարգին
3) Շուկայական հարաբերությունների վերացում
4) Մասնավոր մանր և միջին ձեռներեցության ձևավորում

17 **Ի՞նչ նպատակով է ԱՄՆ-ում կիրառվել Ֆրանկլին Ռուզվելտի «Նոր կուրս»-ի ծրագիրը:**

1) 1929 թ. սկսված տնտեսական Մեծ ճգնաժամը սեղմ ժամկետում հաղթահարելու համար:
2) Բոլոր միջոցներով խորհրդային տերությանը զսպելու համար:
3) Արևմտյան Եվրոպայի երկրներին ֆինանսապես օգնելու նպատակով:
4) Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրները միավորելու նպատակով:

18 **Երկրի ղեկավարի անունը համապատասխանեցրե՛ք այն երկրի անվանը, որտեղ նա կառավարել է:**

1. Շառլ դը Գոլ	ա. ԽՍՀՄ
2. Ռոնալդ Ռեյգան	բ. Մեծ Բրիտանիա
3. Հելմուտ Քոլ	գ. ԳԴՀ
4. Ուինսթոն Չերչիլ	դ. ԱՄՆ
	ե. Ֆրանսիա

1) 1-ե, 2-դ, 3-գ, 4-բ
2) 1-գ, 2-ե, 3-բ, 4-ա
3) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ե
4) 1-ա, 2-բ, 3-ե, 4-դ

19 **Կատարե՛ք համապատասխանեցում:**

Բնագավառ	*Գործիչ*
1. գրականություն	ա. Արշիլ Գորկի
2. երաժշտություն	բ. Սերգեյ Փարաջանով
3. կերպարվեստ	գ. Ժան Ռենո
4. կինոռեժիսոր	դ. Դմիտրի Շոստակովիչ
	ե. Ֆրանսուազ Սագան

1) 1-դ, 2-ե, 3-բ, 4-ա
2) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ
3) 1-գ, 2-ե, 3-ա, 4-բ
4) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ

20 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա. Չինական Ժողովրդական Հանրապետության հռչակումը:
բ. Թուրքիայում հանրապետության հռչակումը:
գ. Իրանի Իսլամական Հանրապետության հռչակումը:
դ. Հնդկաստանի լիակատար անկախության հռչակումը:

1) գ, դ, բ, ա
2) ա, դ, գ, բ
3) դ, բ, ա, գ
4) բ, ա, դ, գ